Աղբիւրի յաւելուած ՑԵԼԾՈՆ № 282

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 4 կիրակի յունուարի 28 | տասնեւերկուերորդ տարի 1901

XIX ԱՂԲԻՒՐ XIX և XII ՏԱՐԱԶ XII

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար։

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար։

Կըհրատարակուեն նոյն ուղղութեամբ և աշխատակիցների մասնակցութեամբ։

Աղբիւր-Տարազի տարեկան բաժանորդագրութիւնը յաւելուածով եւ պրեմիայով **10** *րուբ. է, արտասահման* **18** *ր., կամ* **50** *ֆր.*

ՊԱՐՈՒԶԻ ՄՈԴԱ, ԻՒԼԻՒՍՏՐԱՑԻՈՆ, ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, գեղանի փառակազմ **ՕՐԱՑՈՅՑ**

ստանում են ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ միեւնոյն հասցէով ստացող բաժանորդները

Աղբիւրի **տարեկան գինը 3** *րուբ. Տարազինը* **6** *ր.։*

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ *կամ Tiflis* (Caucase) *Réd. des jour.* Agbur et Taraz

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ

III

XIX-րորդ դարի ընթացքում տպագրական գործն էլ հսկայական առաջադիմութիւն է արել։

Ընորհիւ տեխնիքական կատարելագործման և մի շարք սոցիալական հանգամանքների՝ նա բարեփոխուել է ներքին և արտաքին կողմից, նիւթական և բարոյական տեսակէտից։ Այդպիսով նա գարձել է մի զօրեղ գործօն ներկայ կուլտուրայի։ .....

Տպագրական գործի զարգացումը XIX-րորդ դարում սկսուեց տառեր ձուլելու մեքենայի գիւտով։ Դրա հետ միասին գործածութեան մէջ մտաւ մի առանձին մեքենայ, որի շնորհիւ հնարաւոր գարձաւ միաժամանակ տպագրել թերթի երկու երեսի վրայ։

Դրանից յետոյ կատարելագործումն ու բարեփոխումը շարունակուեց և հետզհետէ գործածութեան մէջ մտան Կենիգի շոգեշարժ մեքենան, Մարինեան արագատիպը և տպագրական գործի սեպհականութիւն գարձած ձուլարանն ու փորագրութիւնը (литографія), ցնգագրութիւնն (цинкографія) ու լուսանկարչութիւնը։

Այդպիսով տպագրական գործն իր մէջ միացնում է մի շարք բազմազան պոլիգրաֆիական հիմնարկութիւններ։

Կան տպարաններ, որոնք իրանց սեպհական թղթագործարաններն ունին։ Ընդհանրապէս տպագրական գործի զարգացման մասին գաղափար կարելի է կազմել այն իրողութիւնից, որ երկրագնդի բոլոր կողմերում տարածած են հսկայական գործարաններ, որոնք պատրաստում են ահագին քանակութեամբ թուղթ։ Օրինակ Սորբելի գործարանը (Ֆրանսիայում) պատրաստում է օրական 8000* կամ տարեկան 2,600,000 վերստ թուղթ։

Պարիզի ազգային տպարանն ունի 138 լեզւի տառեր

* „Вѣстникъ иностран. литературы“ 1900 թ.

և 153 ֆրանսիական շրիֆտներ։ Նա տպագրում է օրական մօտ 10 000 կտոր գիրք։ Նոյն քաղաքի Դիդոյի տպարանը պատրաստում է օրական մօտ 5,000 գիրք, իսկ Մարինիօնի տպարանը մի քանի ժամում տպագրում է աշխարհիս ամենատարածուած թերթ «Le petit journal» ի միլիօնաւոր օրինակները։ Նոյնպիսի զարմանալի արագութեամբ է գործում և Էդին Բարդի «Icotsman» լրագրի տպարանը, որը մի ժամում տպագրում է 384 000 թերթ։

Տպագրական գործը չափազանց զարգացած է Ֆիրմանիայում, ուր տպագրւում է տարեկան միջին թիւով 14 000,000 գիրք և Ամերիկայի միացեալ նահանգներում, ուր տպագրւում է տարեկան 40,000,000-ից աւելի գիրք։

Թուսիայում նրա մեծութեան համեմատութեամբ այնքան էլ զարգացած չէ տպագրական գործը։ Այստեղ տպագրական հիմնարկութիւնների ընդհանուր թիւը միայն 1,958 է, որից 255 Պետերբուրգում և 212 Մոսկւայում։

Ահա այդ պատկերն է ներկայացնում տպագրական գործի տեխնիքական զարգացումը։ Այժմ տեսնենք, թէ նա ինչ առաջադիմութիւն է արել բարոյական տեսակէտից։ Գրեթէ ամենուրեք նա որոշ չափով ազատել է տիրող տարրի ճնշումից—այսպէս անուանած գրաքննչական հալածանքներից և ընդհանուր առմամբ արդարացրե է բանաստեղծի այն խօսքերը, թէ

Ты гонишь невѣжества ложь,
Ты вѣчно жизнью ново,
Ты къ свѣту, ты къ правдѣ
Ведешь свободное слово!

IV

Տասնիններորդ դարը մեծ չափով հեշտացրել է մարդկանց մտաւոր հաղորդակցութիւնը, առնչութիւնը, հեռագիր, հեռախօս, ֆոնոգրաֆ—ահա այդ իրողութեան կենդանի ապացոյցները։ Ով որ կարդացել է Բելլամիի «Looking Backivard» ֆանտաստիքական վէպը, նա անշուշտ հիացած կըլինի հեռախօսի միջոցով տուող կոնցերտների նկարագրութեամբ։ Եւ ինչպէս չըհիանալ. այդտեղ նկարագրւում է, թէ ինչպէս իւրաքանչիւր մարդ իր տան նստած՝ կարողանում է ամեն ժամանակ հեռախօսի միջոցով լսել այս կամ այն օպերան, այս կամ այն երաժշտութիւնը։ Բայց մի՞թէ դրանից պակաս զարմանալի երևոյթ է այժմ Բուդա-Պեշտում գոյութիւն ունեցող «Հեռախօս լրագիրը*»։ Այդտեղ կայ մի կենդրոնական կայարան, ուր հաւաքւում են քաղաքի ամենաթարմ լուրերը և ապա հեռախօսի միջոցով հաղորդւում «Հեռախօս-լրագրի» բաժանորդներին։ Այսպիսով մարդիկ հնարաւորութիւն ունեն տպած թերթերը կարդալուց առաջ ծանօթանալու ընթացիկ նորութիւնների հետ։

Էլեքտրական ոյժի բազմազան գործածութիւնը առաջ է բերել բազմաթիւ մեքենաներ, սակայն դրանց մասին մի առ մի խօսելը շատ հեռուն կըտանէր։ Այժմ գէթ համառօտակի յիշենք մնացած նշանաւոր գիւտերը, որոնք նոյնպէս XIX դարի սեպհականութիւն են կազմում։ Դրանց մէջ առաջնակարգ տեղ բռնում են «Բեօնտգենի ճառագայթները», որոնց միջոցով հնարաւոր է դիտել նոյն իսկ այնպիսի առարկաներ, որոնք անթափանցելի են և անմատչելի սովորական լոյսին։

Լոյսի մաճուակրկիս վերլուծումը, որի միջոցով աւելացել են մարդկային գիտելիքները տիեզերքի մասին և հնարաւոր է դարձել ճշտութեամբ որոշելու աստղերի տարածութիւնը, քիմիական բաղադրութիւնը, և նոյն իսկ շարժման արագութիւնը։

Ցիգանական էլեկտրաշօճի բեօրիան կամ Դարւինիզմ *, որը մեծ յեղափոխութիւն առաջ բերեց ամբողջ գիտակցական աշխարհում.

Տնտեսական մատերիալիզմ **, որը պնդում է թէ սոցիալական կեանքի ամենաբարդ ու ամենաառաջին դրսեւորումներն են կազմում մարդու տնտեսական ու նիւթական պահանջները. դրա շուրջն են պտտւում պատմական բոլոր երևոյթները։

Բջիջային (клѣточная) բեօրիան, որ հաստատում է թէ ամենաբարձր օրգանիզմներն անգամ առաջ են եկել սկզբնական հասարակ բջիջից։

Նոյն XIX դարի երկրորդ կիսում պարզւեց մթնոլորտային փոշու մեծ նշանակութիւնը։ 1867 թ. յայտնի ֆիզիկոս Տինդալ գտաւ, որ առանց այդ փոշու լոյսի ճառագայթները խաւար կերևային, որովհետև նրանք միայն անդրադարձման միջոցով են տարածւում, իսկ բոլորովին մաքուր օդը, ինչպէս յայտնի է, միանգամայն թափանցիկ է և հետևապէս անկարող է անդրադարձնել։ Մթնոլորտի ամենաբարձր շերտերում չկայ այդ փոշուստի և այնտեղ տիրում է թանձր խաւար։ Առանց այդ փոշու չէին լինի ոչ մառախուղ, ոչ ամպ և ոչ բարեբեր անձրևներ. գոլորշիացած ջուրը վերև բարձրանալով՝ կհաւաքւէր և նորից գետին կրթափւէր ամբողջ հեղեղներով։

XIX դարի ընթացքում հիպնոտիզմն ու գանգաբանութիւնն (френологія) էլ կրաւել են որոշ ուշադրութիւն. սակայն դեռ դրական հիմք չեն ստացել և վիճելի շատ կողմեր ունեն։

Ահա դրանք են տասնիններորդ դարի սեպհականութիւնը կազմող գիւտերն ու նշանաւոր երևոյթները, որոնք այնքան բազմազան բարիքներ ու չարիքներ (օր. արիւնահեղ պատերազմները, անյագ շահասիրութիւնը, անձարակ հարստահարութիւնը և այլն) են պատճառել ամբողջ մարդկութեանը։

Ահա այդպիսի սեպհականութեամբ է մարդկութիւնը ոտ դնում XX դարը, վառվռուն յոյսեր տածելով թէ՝

«Выйдетъ изъ этого шума борьбы и стоновъ
Великое, истинное братство...»

Այո, կըգայ վերջապէս ճշմարիտ հաւասարութիւնն ու եղբայրութիւնը, բայց դեռ որքան ժամանակ, որքան զոհեր են հարկաւոր դրա համար։

Ե. Թ.

---

* Տես Դարւին.
** Տես Կարլ Մարքս.

---

* А. Д. Уоллесъ „Чудесный вѣкъ“.

ՀՈՎԵՐՆ ԸՆԿԱՆ...

—

Հովերն ընկան, գովերն եկան,
Արեգակը մայր մըտաւ...
Ա՛խ, էս ճամբէն շա՛տ երկար էր,
Սիրտըս անո՛ւշ քուն մտաւ...

—

Այդ հովերու, գովերու դէմ
Կուրծքըս բացի, ծծեցի.
Անո՛ւշ, անո՛ւշ հայրենիքիս
Համն ու հոտը զգացի...

Եւ այն քա՛ր-քա՛նդ բեկորները,
Ֆար ու հողը սրբազան՝
Պատկերացան աչքիս առաջ,
Եկան շարք-շարք շաւիղացան...

—

Փաղիկները չորացել են
Եւ դաշտերը ամայի...
Ես ծունր իջած Համբուրում եմ,
Լիզում հողը հայրենի...

Կայազերաց Աբ. Դաւթեանց

ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

—

Վերջին տղէտներից հասած տաճկահայի վնասներն այնքան մեծ են ու խոր, որ հազիւ թէ կարելի լինէր այն օգնութիւնն՝ որ ցոյց է տուած մինչև այժմ թէ Հայերի և թէ օտարների կողմից՝ ոչ միայն վերջնական, գոնէ բաւարար համարել: Այդ տեսակ խոշոր զրկանքները պահանջ ունեն աւելի զգալի և որ գլխաւորն է՝ շարունակական օգնութեան: Ներկայումս տաճկահայի խոշոր գաղթականներից մէկն էլ հրապարակում մնացած այն բազմաթիւ որբերն են, որոնց պաշտպանութիւնը կազմում է Հայոց պատրիարքարանի և այդ նպատակով կազմած այլազգի քանի մի ընկերութիւնների գլխաւոր հոգսերից մէկը: Այդ մարդասիրական գործը տարիներ առաջ ունեցաւ իր կոչը, որով ընդհանուր մարդկութեան ուշադրութիւնն էր հրաւիրում այն տասնեակ հազարաւոր թշուառացած եղեխաների վրայ, որոնք այնքան դառն և անողորմ կերպով յանձնուած էին կորստեան վտանգին: Կոչն ունեցաւ իր արձագանքը. 1897 թուից ոլորած իրաւ եռւից հրապարակում երեւացին մի շարք որբանոցներ, ուր ապաստան գտան շատ և շատ անպաշտպան մանուկներ: Որբանոցները գնալով աճեցին, այնպէս որ երեք չորս տարում դրանց թիւը քառապատկուեց: Ներկայումս միայն պատրիարք Հօր Հսկողութեան տակ գոյութիւն ունեն 37 որբանոցներ, 1813 որբերով. որոնցից 1680 տղաներ են, իսկ մնացած 133 աղջիկ, հիմնուած երկրի 33 վիճակներում: Գերմանական երկու՝ Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտէների ձեռքով հիմնուած են գլխաւորապէս երկրի կենդրոններում ու գաւառներում թուով 34 որբանոց, որոնցից երկուսը Պարսկաստանումն են գտնուում, երկուսն էլ Բուլղարիա, բոլորը 1731 որբերով: Սրանցից Ֆրանկֆուրտի կոմիտէն հիմնել է 25 որբանոց 1077 որբերով, 643 տղայ և 434 աղջիկ. իսկ Բեռլինի՝ 9 որբանոց 654 որբերով (տղայ և աղջիկ որոշ չեն): Եւրոպական մնացած պետութիւնների ձեռքով (դրանց մէջ հաշուած նաև Ամերիկան և Անգլիան) հիմնած ինչպէս որբանոցների, նոյնպէս և որբերի թիւի մասին ճիշտ տեղեկութիւն բացակայում է, միայն ընդհանրապէս դրանց խնամած որբերի թիւը հաշուում են 5—6000: Կան նաև երկու որբանոց՝ Կիպրոսի և Ռէչքանադի, որոնցից առաջինն ունի առանձին խնամող խորհուրդ ու տնօրէն, կազմած Մանչէստրի Հայոց հոգևոր հովից ու գաղթած Հայերից. սրա որբերի թիւի մասին նոյնպէս յիշատակութիւն չկայ: Իսկ երկրորդ որբանոցը գտնուում է Վենետիկի Մխիթարեանների Հսկողութեան տակ և ունի 30-ի չափ երկսեռ որբ: Որբանոցներից զատ կան նաև բազմաթիւ որբեր, որոնք ապաստանութիւն են գտած մասնաւոր ընտանիքներում, որոնց թիւի մասին նոյնպէս պակասում են որոշ տեղեկութիւններ և միայն յիշատակում են շատ ընդհանուր ձևով. օր. այն գիւղերում, ուր որբանոցներ չկան և որբերի պահպանութիւնը հոգացում է կամ ազգականների կողմից, կամ մասնաւոր ընտանիքների և կամ ամբողջ համայնքի, այդ տեղերում պատրիարքարանը վերաբացել է այն դպրոցները, որոնք մի ժամանակ միջոցների սղութեան պատճառով փակած էին՝ տալով ուսումնարաններին նպաստից սնդկից մասնաւոր օգնութիւն, որբերին էլ բաժանելով ձրի դասագրքեր, հագուստ և այլն: Այդ տեսակ դպրոցների թիւը 54 է հաշուած: Ընտանիքներում ապաստանածներից յայտնի են միայն գերմանական

կոմիտէների ձեռքով տեղաւորած 65 որբեր։ Եթէ բոլոր ժամանակաւորապէս ապահոված որբերը մի ընդհանուր թիւ առնենք, կըստանանք 10,000 հոգի։ Մինչդեռ հրապարակում անօգնական որբերի թիւը թէ հայ և թէ օտար տեղեկութիւններին նայելով 30-ից—50,000 է հասնում։ Այնպէս որ, մինչեւ այժմ եղած ընդհանուր օգնութիւնը կարողացել է բաւարարութիւն տալ որբերի միայն $^1/_4$ մասին, իսկ մնացած $^3/_4$ մասը, այն է մօտ 30,000 որբ, դեռ եւս մերկ ու հացած սպասում են օգնութեան։

Որբանոցներից շատերին կից շինուած են նաև արհեստանոցներ, հիւանդանոց, դեղատուն (որից օգտւում են ձրիապէս նաև աղքատ տեղացիները), մի քանիսն ունին նոյն իսկ առանձին բժիշկ. մի երկու տեղ էլ որբանոցներին կից հիմնուած են այրի կանանց ապաստարան։ Բոլոր որբերի՝ թէ տղաների և թէ աղջիկների համար սկզբնական կրթութիւնը պարտադիր է. իսկ ընդհանրապէս իւրաքանչիւր որբանոց հանդիսանում է նախ՝ կանոնաւոր դպրանոց, ուր կան 1, 2, 3, 4... նոյն իսկ 7 դասատու ուսուցիչներ, որոնք անցնում են՝ հայոց լեզու, գերմաներէն, տաճկերէն, իտալերէն, ֆրանսերէն, անգլիերէն, թուաբանութիւն, պատմութիւն, կրօն, երգեցողութիւն, աղջկերքը ձեռագործ և այլ առարկաներ. և երկրորդ՝ արհեստանոցներ, ուր սովորում են դերձակութիւն, հիւսնութիւն, կօշկակարութիւն, դարբնութիւն, կաշեզործութիւն, գորգագործութիւն, ոստայնագործութիւն, թիթեղագործութիւն և այլ արհեստներ։ Նկատելու արժանի է, որ գաւառացի տղաներին առանձնապէս վարժեցնում են իր երկրին պէտքական արհեստների, որոնց ապագայում վերադարձնելու են իրանց հայրենիքը։ Որբանոցների գլխաւոր նպատակը կեանքի մարդիկ, կանոնաւոր արհեստաւորներ պատրաստելն է, քան կրթուած անհատներ բազմացնելը։ Մեզ հասած տեղեկութիւններին նայելով ընդհանրապէս որբանոցները շատ կանոնաւոր ու լուրջ հիմունքների վրայ են դրուած, իսկ դեկավարների կողմից էլ նկատւում է դովելի վերաբերմունք։

Այժմ թեթեւակի նայենք թւերին և տեսնենք, թէ որբերի գործում զուտ հայկական օգնութիւնն ինչ դեր է խաղացել և թշւառութեան ո՞ր մասին է բաւարարութիւն տւել։

ՀԱՅԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Պոլիս. Պատրիարքարանի և ազգային կալւածքից ստացած արդիւնքով 238 տղայ։ Կարին. Նպաստից սնդուկից և Կ. Եզեանցի շնորհիւ գոյց. գումար 100 տղ.։ Հաղէշ. Նպաստից սընդուկից 41 տղ։ Վան. նոյն տեղից 100 տղ.։ Արմաշ. Նոյն տ. 15 տղ.։ Վան 32 տղ.։ Տիգրանակերտ. Նպաստից սնդուկից մինչև 99 թ., ապա Գ. Ջանշեանի «Ընդարակաև օգնութիւն» 40 տղ։ Աղթամար. նոյն 25 տղ.։ Բալու. նոյն 25 տղ.։ Կիւրիւն. նոյն 40 տղ.։ Սիս նոյն 24 տղ.։ Զարսանճագ. նոյն 27 տղ։ Հասան պէյլի աւան. նոյն. 22 տղ.։ Մուշ. նոյն* 25 աղջ.։ Աղրակ. նոյն* 25 տղ.։ Փռնուզ. նոյն* 35 տղ.։ Ալաշկերտ. նոյն* 25 տղ.։ Սեբաստիա. Ս. Զահազիզեանի նախագ. մի մասնախմբի միջոցով 168 տղ.։ Մալաթիա. նոյն միջոցով 50 տղ.։ Խզան. նոյն* 30 տղ.։ Վան. տիկ. Նադիրեանց Վեհափառ Հայրապետի 60 ամեակի առիթով* 25 աղջ.։ Մանճքլէխ. Մոսկուացի Յով. Յակոբեանի* 25 տղ։ Եդեսիա. Նոր-Նախիջևանի որբախնամ մասնախմբի կողմից 64 տղ.։ Կեսարիա. Վանական և տեղական նպաստ. 45 տղ.։ Զմիւռնիա տեղացի հայերի կողմից 45 աղջ։ Զմիւռնիա. տեղացի հայերի կողմից 45 տղ.։ Էդիրնէ. տեղացիների նպաստներով 13 տղ.։ Խարբերդ. Կիւլպէնկեանի հանգանակ. դրամով 33 տղ.։ Մուշ. Նախ նպաստից սնդուկից, ապա Պետերբուրգի հայոց եկեղեցու նպաստով 44 տղ.։ Մարաշ. Իսահակ Ժամհարեանցի 90 տղ.։ Զէյթուն. Առաքել Ծատուրեանի 90 տղ.։ Ակն. Արմաւիրցի Թորոսեան եղբ. 37 տղ.։ Տիվրիկ. Որբոց սնդկից և տեղական միջոց. 20 տղ.։ Հաճըն. Արմաւիրի և Եկատերինոդարի հայերից 26 տղ.։ Կիպրոս. Մանչէստրըի հայերից ??։ Ռէչդանադի. տեղի եպիսկոպոսի կազմ. ընկ. կողմից. 30 տղ.։ Արապկիր* Թոթոսեցոյն և Եգիպ. որբախնամ ընկեր. և Մանչէստր բնակ. ւող մի օրիորդի կողմից 56 տղ.։ Վան* Նիւ-Եօրքի որբախն. տիկն. ընկ. 38 աղջ.։ Այնթափի* Մանչէստրըի որբախն. մասնախումբ 46 տղ.։ Ընդամենը 1680 տղայ և 133 աղջիկ։

Այսպիսով պարզ է, որ 10,000 որբերից զուտ հայկական օգնութիւնը պատսպարել է 1813 հոգի, որը կազմում է եղած օգնութեան $^1/_5$ մասը, իսկ ընդհանուր թշւառութեան աւելի քան $^1/_{20}$ մասը։ Երևոյթը չափազանց ցաւալի է և որ գլխաւորն է՝ հայութեան համար միանգամայն անպատւաբեր, որովհետև սրանով ապացուցւում է այն, որ հայի մէջ ոչ միայն մարդասիրական զգացմունքը, այլ նոյն իսկ հարազատի օգնութեան գաղափարը դեռ այնքան էլ զարգացած չէ...

Ֆալով մասնաւորապէս ռուսահայերի ցոյց տւած օգնութեան, պիտի ասել, այնքան չնչին բան է նրանց արածը համեմատած գոյութիւն ունեցող ահագին կարիքի հետ, որ նոյն իսկ դժւարանում ենք օգնութիւն անունը տալ։ Ռուսահայը Գ. Ջանշեանի հետ միասին ձեռք է մեկնել միմիայն 962 որբի, որից 912 տղայ է, իսկ 50 աղջիկ։ Եթէ սրանից էլ

***-ով որբանոցները իրանց գործունէութիւնը դեռ ևս չեն սկսած։

* Թոթոսեցոյն և Եգիպ, Նիւ-Եօրքի և Մանչէստրըի որբախ. ընկ. օգնութիւնը, որ հաշւել եմ „Հայկական օգնութեան“ մէջ, այնքան էլ պարզ չէ, հայկական օգնութիւն է թէ օտար։

զատենք «Եղբայրական օգնութիւն» գրքի հաշիւով պատսպարած 313 որբերը, որը իրաւամբ պիտի համարել ռուս լաւագոյն զրողների գործ, կրմնան 649, որոնք կրկազմեն ռուսահայերի օգնութեան ամբողջ գործը՝ 50 000 որբից պատսպարել ընդամենը 649 հոգի, այն էլ մի միլիոնից աւելի ժողովրդի կողմից?.. Այս էլ պիտի նկատել, որ ամբողջ այդ օգնութիւնը, չըհաշուած Արմաւիրի և Եկատերինոդարի Հասարակութեան կողմից պահած 1 որբանոցը, իր 26 որբերով, բացառապէս անհատական գործեր են, այն էլ Ռուսիայի հայերի ձեռքով կատարած։ Իսկ ամբողջ կովկասը իր հայաշատ քաղաքներով՝ Թիֆլիս, Բագու, Բաքում, Երեւան, Ղուբա, Ֆանձակ, Ալէքսանդրապոլ... մինչեւ օրս էլ որբերի գործին մասնաւոր օգնութիւն չեն հասցրած ..

Արտակ Ղազարեան

Յ. Գ. Թերը քաղած են պ. Գ. Մելիք-Կարագեօզեանի «Գերմանական օգնութեան ընկերութիւնները տանկահայերի համար» յօդուածից, տպուած նախկին Մուրճում և Վենետիկի Մխիթարեանների հրատարակած «Ուրբուճի» պատկերազարդ հանդիսից.

Նոյն

Քննադատական

Դրականութիւն եւ մամուլ

Նոր տարով և նոր դարեշրջանով սկսւեց «Մուրճ» ամսագրի համար նոր շրջան, վերջինիս նոր խմբագրական կազմով հրատարակելովը։

Մուրճի այս նոր համարը բաւական հաստափոր է դուրս եկել, իսկ բովանդակութեան կողմից նա ներկայացնում է բաւական հետաքրքրութիւն։ Գեղարուեստական բաժնում զետեղուած են պ. Ահարոնեանի «Ուշացած սէր» պատմուածքը պ. Էջեի «Փիւղի մարդիկ»-ը, որոնք կարդացւում են հետաքրքրութեամբ, իբրև ամսագրական-ընթացիկ պատմուածքներ, բայց ոչ իբրև զուտ գեղարուեստական երկեր։ Թարգմանական երկերից կան Ա. Դոդէի «Ֆրոմոն կրտսեր» նշանաւոր վէպի թարգմանութիւնը (թարգմանել է պ. Տ. Յովհաննէսեան)։ Մոպասանի «Սարսափելի դէպք» փոքրիկ պատմուածքը և Հ. Սենկևիչի «Պօզճանի ուսուցչի յիշատակարանից» վէպիկի թարգմանութիւնը, որ կատարել է պ. Լիսիցեանը։ Միայն մենք չենք հասկանում թէ ինչու պ. Լիսիցեանը թարգմանել է Սենկևիչի «Պօզճանի ուսուցչի յիշատակարանը», քանի որ դա արդէն թարգմանուած կայ մեր գրականութեան մէջ, քսաներկու տարի սրանից առաջ։

Գրական պատմական բովանդակութեամբ մի քանի յօդուածներ էլ կան, որոնցից ամենահետաքրքիրն է պ. Ս. Մալխասեանի «Հայագիտութիւնը XIX դարի սկզբում» յօդուածը։ Պ. Լէօի «Հայոց գրականութիւնը XIX դարում» երկար և շարունակուող յօդուածը ունի աւելի շուտ գրական քան թէ պատմական արժանիքներ։ Պ. Լիսիցեանի Սենկևիչի մասին գրած փոքրիկ գրական ակնարկը, գրուած է շատ մակերեսութիւն և հանճարեղ ռոմանիստի ստեղծագործութեան շատ կողմերը շատ թոյլ են շօշափուած։

Ցաւ ցանկալի կըլինէր, որ «Մուրճ» ներքին և արտաքին տեսութիւններն ու «գաւառական կեանք» բաժինը աւելի բազմակողմանի, լուրջ կերպով կազմուին, ի նկատի ունենալով նրանց խոշոր (մանաւանդ վերջին երկու բաժինների) նշանակութիւնը, հէնց առաջին համարից մենք մեզ թոյլ չենք տալիս շատ խստապահանջ լինել այդ բաժինների վերաբերմամբ։ Նոյնպէս շատ ցանկալի կըլինէր, եթէ «Մուրճի» խմբագրութիւնը աւելի մեծ ուշադրութիւն դարձնէ տնտեսական հարցերի և խնդիրների ուսումնասիրութեան վրայ, որոնց առանցքի շուրջը պտտւում է ժամանակակից ամբողջ կեանքը։ Վերջացնելով մեր այս համառօտ նկատողութիւնը «Մուրճի» մասին, մենք ցանկանում ենք մեր գրական եղբայրակցին յաջողութիւն հայկական գրականութեան փշոտ ասպարիզի վրայ։ Մաղթում ենք նրան ունենալ յարատեւութիւն, բայց խիղճ կատարումն իր հասարակական պարտականութիւնների, անկեղծ, ազնիւ անշահասէր գործունէութիւն. կըցանկանայինք, որ նա յառաջ բերէ որքէ շարժում մեր լճացած կեանքում և ունենայ նշանակութիւն մեր քաղաքակրթական զարգացման վրայ։ Միայն պէտք է ասենք, որ «Մեր ընթերցողին» առաջնորդողը եթէ չըլինէր աւելի լաւ կըլինէր, որովհետև նրա մէջ ոչինչ նոր բան ասուած չըկայ և ոչ էլ նոր «Մուրճի» profession de foi ն է. դա մի շատ անկապ և հապճեպ գրած յօդուած է, լիքը ընդհանուր դրագներով։ Աւելի մեծ կըլինէր տպաւորութիւնը, եթէ «Մուրճը» ուղղակի սկսել էր պ. Կ. Կրասիլնիկեանի Լոնգֆէլլոյից թարգմանուած «Կեանքի սաղմոսը» ոտանաւորով և ոչ թէ «Մեր ընթերցողներին» անկապ, ծամծմած առաջնորդողով։

***

Ստացանք նոյնպէս «Թատրոն» հանդիսի վերջին (VII երդ) գիրքը, որի բովանդակութիւնը հետաքրքիր է և կազմուած է բարեխիղճ կերպով։ Ընորհիւ մերհասարակութեան վհատեցուցիչ անտարբերութեան, ինչպէս դէպի իւրաքանչիւր գրական երեւոյթ, նոյնպէս և դէպի մեր այդ անփոխարինելի թատրոնական-գեղարուեստական օրգանը, նա տիպար է այդպէս անկանոն կերպով հրատարակել։ Ամօթ և նախատինք մեր ժողովրդին և կեղծ—ինտելիգենցիային, որ չի կարողանում տարին երեք րուբլի վճարելով պահպանել «Թատրոնը»։ Ցաւ, շատ ցաւալի է որ մեր գրականութեան և մամուլի մէջ յառաջ են գնում և ժողովրդականութիւն են վաստակում միայն նրանք, որոնք ամբոխի ետևից գնալ և նրա սուր ինստինկտները շոյել գիտեն։ Ցաւոտում ենք մեր խորին հաւատարակիչ—խմբագիր պ. Ղ. Թարխանեանին, որ չընայելով բոլոր դժուարութիւններին և խոչընդոտներին իր գործը այնքան հերոսաբար և բարեխիղճ կերպով է յառաջ տանում։ Մենք, հայերս մեր հնաւանդ սովորութեամբ միայն «Գնա մեռիր, արի սիրեմ» գիտենք...

***

«Кавказскій Вѣстникъ» ամսագրի վրայ մենք միշտ առանձին ուշադրութիւն ենք դարձրել և ուրախութեամբ արձանագրել նրա լուսաւոր և ուրախալի կողմերը, բայց մեր կար-

նիքով խմբագրութիւնը աւելի մեծ ծառայութիւն մատուցած կըլիներ հասարակութեանը, եթէ իր մի քանի բաժինները յանձներ աւելի բարեխիղճ, անաչառ և ձեռնհաս անձանց։ Օրինակ այդ ամսագրի 1901 թուականի առաջին համարում գետեղած «Հայկական մամուլի տեսութիւն» խորագրով յօդուածն ունի մի քանի աններելի թերութիւններ։ Պ. յօդուածագրի կարծիքով Մշակ թերթի «առաջնորդողները և մամուլի տեսութիւնները շատ ակադեմիական բնաւորութիւն էին կրում և աւելի շուտ ամսագրական քան թէ լրագրական յօդուածներ էին»։ Որ «Մշակի» առաջնորդողները կրում էին ոչ թէ «ակադեմիական և ամսագրական բնաւորութիւն», այլ տգիտութեան և անփոյթութեան գոյն, այդ յայտնի է նրա բոլոր անաչառ և զարգացած ընթերցողներին. հէնց օրինակի համար վերցրէք, ընթերցող, նրա առաջնորդողները օտար կապիտալների, հազիւ տընտեսական և կապիտալիստական կեանքի, պարսիկ բանւորների, զանազան ընթացիկ տնտեսական և հասարակական խնդիրների մասին, որոնք պատկերացնում են «Մշակի» խմբագիրների արխի-տգիտութիւնը. փաստեր այժմ չենք ուզում յառաջ բերել, մենք իր ժամանակին այդ բոլորը ցոյց ենք տւել. թող մեր ընթերցողը նեղութիւն կրէ դիմել իր յիշողութեան օգնութեանը. Խոկ «մամուլի տեսութիւնները»! «Մշակի» խելօք ընթերցողներից արդեօք որը չի խոստովանի, որ այդ բաժինը բոլորին արդէն ձանձրացրել է միևնոյն փրազների, դատողութիւնների (երբեմն նոյն իսկ շատ ծիծաղելի) կրկնողութեամբ, որ «Մշակի» այդ բաժինը վաղուց արդէն մեռած է ու մեռած։ Այսպիսի «խոհրիմաստ» մտքեր «Մշակի» առաջնորդողների, «մամուլ» բաժնի, ներքին տեսութեան մասին, «որը աւելի բարձրը էր կանգնած քան թէ այն ամենը ինչ որ հէնց խմբագրութեան մէջ գրւում էր». (ի հարկէ, դա զարմանալի չէ, ի նկատի ունենալով, որ «Մշակը» բազմաթիւ գաւառական թղթակիցներ ունի) պարզապէս курамъ на смѣхъ։

«Տարազի» մասին խօսելիս պ. յօդուածագիրն ասում է թէ «նա մի քանի յօդուածներ է տւել այս տարւայ մէջ (ընդգծումը մերն է) տնտեսական և քննադատական բովանդակութեամբ». պարոնը սխալւում է որովհետև «Տարազը» ոչ թէ մի քանի, այլ բազմաթիւ քննադատական և տնտեսական յօդուածներ է տւել. թող աւելի ուշադրութեամբ պարոնը թերթէ «Տարազի» 1900 թուականի համարները։ Բացի դրանից պ. յօդուածագիրը գրում է թէ՝ «Տարազը իբրև պատկերազարդ հրատարակութիւն, գետեղում էր պատկերներ, ինչպէս օրւայ խնդիրներին վերաբերեալ, նոյնպէս և ընդհանուր բովանդակութեամբ,—որոնք շատ թոյլ էին դուրս գալիս և չէին զարդարում այդ հրատարակութիւնը»։ Մեր ընթերցողներին ենք թողնում դատելու, թէ որքան ճիշտ է այդ նկատողութիւնը, միայն այսքանը կասենք, որ Թիֆլիսում հրատարակւող բոլոր թերթերը, իրանց պատկերները վերցնում էին և վերցնում են մեզանից։

Այդ quassi տեսութեան մէջ ոչ մի խօսք ասւած չէ մեր մեկ մանկական ամսագիր «Աղբիւրի» մասին. դա ուղղակի անբարեխղճութիւն է և ուրիշ ոչինչ։ Բացի դրանից մեր «Տարազը» և «Նոր-Դարը» շարունակում էին հրատարակել». քանի որ դրանցից առաջինը այժմ շատ հետաքրքրական և բազմակողմանի գիտական-բանասիրական բովանդակութիւն ունի և տալիս է շատ լուրջ յօդուածներ իսկ երկրորդը գնում է շատ կանոնաւոր կերպով և ունի իր ընթերցողների եւ համակրողների մի բաւական ընդարձակ շրջան։

«Кавказскій Вѣстникъ» ի միւս բաժինները,—մանաւանդ Կովկասագիտութեան բաժինը, այս համարում շատ բաւարար կերպով են կազմւած. Ներկայ համարից սկսել է տպագրել Րաֆֆու «Խենթի» թարգմանութիւնը (Ն. Կարա-Մուրզայի), որը շատ ուրախալի երևոյթ է։ Մենք ի սրտէ համակրում ենք «Кавказскій Вѣстникъ» ամսագրին. ցանկանում ենք, որ նա կարողանայ իր նպատակները լաւ իրագործել, բայց շատ ուրախ կը լինէինք, եթէ նրա մի քանի աշխատակիցները աւելի անաչառ, բարեխիղճ և անկողմնապահ անձինք լինէին։

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

—

Նորերս Ջմիւռնիայում վախճանւեց մեր գրականութեան և մամուլի ամենահին աշխատաւորներից մէկը՝ Մատթէոս Մամուրեան։ Նա այն հազւագիւտ անձնաւորութիւններից մէկն էր մեր գրական կեանքում, որոնք գրականութիւնը ընտրեցին իրանց կեանքի միակ նպատակը, հաւատարիմ մնացին նրան մինչև իրանց կեանքի վերջը։ Հայց դրա մէջ չէ կայանում միայն Մատթէոս Մամուրեանի արժանիքը. նա անգնահատելի ծառայութիւն է մատուցել մեզ՝ հայերիս իբրև աշխարհաբար լեզւի մշակողներից, կոկողներից և նրան քաղաքացիականութեան իրաւունք տւողներից մէկը այն ժամանակ, երբ ոչ թէ միայն մեզ մօտ՝ Թուսիայում, այլ մանաւանդ Տաճկաստանում գրաբարը դեռ ունէր իր բազմաթիւ համակրողները և հոգեվարքային կռիւ էր վարում նոր կազմակերպւող աշխարհաբարի հետ։ Մատթէոս Մամուրեանի հզօր տաղանդն էր, որ մի քանի ուրիշ իր ժամանակակից լուսաւոր գլուխների հետ, կարողացաւ կոտրել գրաբարի ոյժը և աշխարհաբարի գոյութիւնը դնել հաստատուն հիմքերի վրայ. դա անգնահատելի ծառայութիւն է!

Դա չէ միայն. նա հազւագիւտ էր և նրանով, որ կարողացաւ իր գրական աշխատութիւնները (մեր կեանքի այն շրջանում, երբ մեր ժողովրդի մէջ սէր դէպի գրականութիւնը շատ սաղմնային դրութեան մէջ էր) սիրելի դարձնել բոլոր ընթերցող դասակարգին և գրական ճաշակ զարգացնել մեր մէջ։ Նրա թարգմանութիւնները, որոնք բազմաթիւ են և որոնց գլուխը գործոցն է կլասսիքական «Վէրթէրի» գողտրիկ թարգմանութիւնը,—և ինքնուրոյն երկերով սնել են ոչ թէ միայն արևմտեան այլ և կովկասեան հայութեան մի քանի սերունդները։

Նա գնահատելի և չսրգելի անձնաւորութիւն էր նաև, որպէս անդրդեւելի և անշեղ համոզմունքների տէր

մարդ, որին ապացոյց է Նրա ամբողջ կեանքը և գրական—հասարակական գործունէութիւնը։

Այս համառօտ խօսքերով չի կարելի, ի հարկէ, Մամուրեանի գրական դէմքը ամբողջովին բնորոշել. նա կարող է մի մեծ յօդուածի նիւթ դառնալ, որ կունենայ շատ մեծ հետաքրքրութիւն։ Վերջացնելով մեր խօսքը, աւելորդ չենք համարում մի քանի կենսագրական տեղեկութիւններ էլ հաղորդել Մ. Մամուրեանի մասին։

Նա ծնուեց 1830 թուականին Զմիւռնիայում։ Սկզբնական կրթութիւն ստացաւ իր հայրենի քաղաքի Մեսրոպեան վարժարանում և ապա Պարիզի Մուրատեան ուսումնարանում, որտեղ 1851 թ. ընթացաւարտ է լինում, Լամարտինի ներկայութեամբ տալով իր քննութիւնը, որը հիացմամբ պրօսակում է Մամուրեանի գլուխը։ Այնուհետև նա ուսուցիչ և տեսուչ է եղել զանազան տեղերում և զանազան ուսումնարաններում, միշտ զբաղելով գրականութեամբ և հրապարակախօսութեամբ։ Վերջապէս սրանից 31 տարի առաջ Նա Զմիւռնայում հիմնեց «Առեւելեան Մամուլ» ամսագիրը, որի խմբագիրը և սեպհականատէրը մնաց նա մինչև վերջը. իր ամսագրի մէջ նա գրում էր յօդուածներ «Ծանօթութեամբ, որոնք փայլուն են իրանց սրամտութեամբ և աշխոյժ ոճով։ Նրա մահւամբ «Առեւելեան Մամուլը» անցնում է նրա որդու՝ Հրանտի ձեռքը։ Մամուրեանի յիսնամեայ յօբելեանը կատարեցին անցեալ 1899 թուի հոկտեմբերի 17-ին ընտանեկան մի համեստ տօնով։

ՈՒՀՈՂ ՓՈՓԻԹ

Ամսոյս 25-ին, Նորին Պայծառափայլութիւն Կովկասի կառավարչապետի պալատում կայացաւ մի շքեղ բառուկ. ներկայ էին զանազան հիմնարկութիւնների գլխաւորներ, նահանգների և շրջանների կառավարիչներ, ազնուականաց նախագահներ, օտարերկրեայ հիւպատոսներ և թիֆլիսի բարձր դասակարգի պատկանող անձինք։ Հրաւիրածներին դեղնագոյն հիւրասենեակում դիմաւորում էին հիւրասէր պայծառափայլ իշխան Ի. Ս. Գալիցինը և իշխանուհի Մարիա Ֆեօդորովնան։ Պալատի դահլիճները լուսաւորած էին էլեքտրական առատ լոյսով և շատ շքեղ զարդարած՝ ներկայացնում էին փառահեղ տեսարան։ Բառուկը սկսւեց շատ յաջող կազմած երաժշտութիւնով, որին մասնակցում էին օր. Պապայեան, Կուզնեցովա և Լենսկայա, պ. պ. Բորլսենկօ, Կամիօնսկի և Դարեանով։ Երաժշտամէջտին հրաւիրած անձինք հիւրասիրեցին պարսկական դահլիճում թէյով։ Կոնցերտը վերջանալուց յետոյ պարսկական, նկարչական և բարեւտինեան դահլիճներում՝ շքեղ զարդարած սեղաններով աւելի քան 400 անձինք հիւրասիրեցին ընթրիքով։

—Դոկտոր Ա. Ի. Խատիսեանը մտադիր է առաջիկայ մեծ պասին Թիֆլիսի կրուժոկում դասախօսութիւն կարդալ **ժողովրդական զւարճութիւնների** մասին։

- Կիրակի, ամսոյս 21-ին, հայոց Բարեգործական ընկ. օգտին կազմակերպած շինական պարահանդէսը գրաւել էր մեծ բազմութիւն, այնպէս որ մուտքը հասել է 2500 ր.։

Դահլիճը գեղեցիկ կերպով զարդարած էր շինական ճաշակով. գլխաւոր մուտքի դէմը կառուցած էր մի քիօսկ, որի գլխին բարձրանում էր մեծ բուռնցք, կողքերին շինական խրճիթներ։ Երեկոյթի կենդանութեանը նպաստել էին ներկայ եղող շինական հագուստով և սանրուածքով տիկինները և օրիորդները։ Հիւրերից մէկը Լի-Խունգ Զանգի գրիմն ունէր։ Պարահանդէսի ժամանակ պարեցին շինական կադրիլ, որը ներկայ եղողների խնդրանօք կրկնեցաւ։ Պարերը տեւեցին մինչև առաւօտեան ժամը 5-ը։

—Ամսոյս 21 ին Սպիտակ քաղաքում մի սարսափելի հրդեհ սկսւեց, ուր ամբարւած էր 5—6 միլիոն պուդի չափ մաղրի։ Հրդեհը շարունակւեց մի քանի օր մի վերստաչափ տարածութեան վրայ։ Հրդեհին զոհ են գնացել բազմաթիւ անձինք։ Հրդեհի մէջ հարիւրաւոր այրւածների հիւանդանոցներն են տարել։ Մի խօսքով անցքը սարսափելի էր և զոհերի շատութեան գլխաւոր պատճառը այն էր, որ հրդեհի տեղը փակւած էր մի կողմից ծովով, իսկ միւս կողմերից արդէն ուժգին տարածւած այրւող նաւթամբարներով։

—Քաղաքային օրէնսդրութեան 44 յօդ. բարձրագոյն հրամանով փոփոխած է և ստացել է հետևեալ ձևը՝ „Քրիստոնեայ չեղող իրաւասուների թիւը, ըստ որում է ընդհանուր թիւի մի հինգերորդ մասից աւելի լինի, իսկ Կովկասի քաղաքներում կէսից աւելի (յօդ. 56)։ Այն քաղաքներում, ուր այս կանոնի գործադրութիւնը տեղական պայմաններով անյարմար կամ դժւար լինի, նրանից շեղւելու թոյլատրութիւնը տեղական քաղաքային վարչութիւնների որոշումով կալւած է Ներքին գործոց նախարարից։

—Բագւի շրջանի նաւթահանքերից ստացւած կերոսինի քանակութիւնը 1900 թ. հասնում է 600,326 միլ. պուդի, այն ինչ 1899 թ. ստացել է միայն 525,034,000 պուդ։

Դպրոցական

Մի խումբ մշտապէս արտասահմանում բնակւող ռուսաց գիտնականներ մտադիր են հիմնել Պարիզում ազատ համալսարան, որի մէջ դասախօսութիւնները կարդալու են բացառապէս ռուսերէն լեզւով։

—Լրագիրները յայտնում են, որ լուսաւորութեան նախարարութիւնը նախագծել է Սիբիրիայում բաց անել մի բարձրագոյն ուսումնարան և։

Խառն լուրեր

Անգլիայի էդւարդ է. թագաւորի հրովարտակը «Ծովերի միւս կողմը գտնւող իմ ժողովրդին» վերաբերում է բազմաթիւ մանիֆէստացիաների, որ թագաւորը ստացել է կայսրութեան բոլոր մասերից և յիշում է այնուհետև իր սիրելի մօր յայտնած շնորհակալութիւնը նրա հպատակների ընդարձակ ինքնավարութեան մէջ, ան դադար շարունակւող առաջադիմութեան համար հաւասարապէս նրա պարծանքի համար այն անձինքներով, որոնք իբրև հերոսներ պատերազմում էին Աֆրիկայի հարաւում և յետոյ յայտնում է, որ թագաւորը միշտ պէտք է հաւատայ հաստատապէս իր հպատակների անձնւիրութեանը տէրութեան բոլոր մասերում և ունենալով այդպիսի զօրեղ պաշտպանութիւն, կաշխատի կայսրութեան ընդհանուր բարօրութեան և անդորրութեան համար։

—Հոլանդիայի թագուհին իր պսակադրութեան առթիւ ընդունեց շնորհաւորութիւններ օտարերկրեայ տէրութիւնների դեսպանների շնորհաւորութիւնը իրանց թագաւորների կողմից, դեսպանների հետ ներկայացան և դիպլոմատիքական կազմի մէջ եղող տիկնայք։ Մայրաքաղաքի երաժշտական ընկերութիւնները նւագերգութիւններ կատարեցին թագաւորական-ապարանքի պարտիզի կողմում, որին ունկնդիր էին թագուհին, նշանածդուքսը և թագուհի-մայրը։ Հազմաթիւ հասարակութիւն թագաւորական զոյգին ջերմագին ուրախութեան ցոյցեր արաւ։

—Պարիզի համաշխարհային ցուցահանդէսը ունեցաւ 116½ մլն. ֆր. ծախս և ստացած եկամուտը 114 միլիոն է. ուրեմն պակասը այնքան մեծ չէ, որքան յայտնում էին լրագիրները, իսկ եթէ հաշուենք աւելացած մշտական շինութիւնների գինը՝ ցուցահանդէսը կարելի է յաջողած համարել։

—Ֆրանսիական տէրութիւնը ուզարկում է Ռուսիա երկու արևելագէտներ, որոնք ռուսաց գիտնականների հետ միասին ուսումնասիրելու են Մանջուրիայի Մուկդէն քաղաքի մատենադարանը։ Արևելեան տիրապետները դուրս են տարել արևմտեան Ասիայից բազմաթիւ գրաւոր յիշատակներ, ի միջի այլոց և Հայաստանից, ինչպէս այդ յիշում են հայ պատմաբանները.

Ս ու ր հ ա ն դ ա կ

Մոսկւա. բժ. Ս. Շ.-Ն.։ Կրկին անգամ ստացանք „Մշակը“ վերնագրով ձեր գրւածքը։ Բայց դարձեալ ստիպւած ենք կրկնել՝ գուր չաւիեր. եթէ կամենաք ափսոս և ժամանակ, այդքան գեղեցիկ թուղթ և այդքան խնամքով տպագրութիւն։ Լ՞ինչ էք կորցրել, ինչի ետևից ընկել։

Տիեզերքի մէջ. Խ. Վ.արդանեան։ Յունւարի 17-ից ձեր նամակն ստացանք, բայց ձեր պահանջը անկարող ենք կատարել, քանի որ ոչ հասցէ կայ գրւած և ոչ իսկ նամակի պոստի դրոշմից կարելի է ջոկել, թէ որ անկիւնից է գրւածուրաքանչիւր մարդ երբ մէկին նամակ է գրում, նամանաւանդ երբ պատասխանի էլ սպասում է, պէտք է նամակի ճակատին իր հասցէն գրի։ Գալով խմբագրութիւնների և իրանց բաժանորդների յարաբերութեան, այդ մի փոքր առաձգական հարց է մենք ոչ ցանկութիւն և ոչ էլ կարողութիւն ունենք մեր բաժանորդներին շոյելու և սկի պէտք էլ չունենք այն տեսակ բաժանորդների, որոնք սեր սպիտակից անգամ ջոկել չըգիտեն։

Ս. Էջմիածին. „Արարատի“ խմբ.։ Նիւ-Եօրկից ստացւածը պոստով փոխադրւած է մեզ։ Պակասի համար ուղղակի իրանց դիմեցէք։

Բագու. Լ. Մ.։ Ուղարկեցինք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

—

Մեր բաժանորդներից ոմանք տըր տունջներ են յայտնում Տարագի №№ը անկանոն ստանալներուն համար։ Յայտնում ենք ի գիտութիւն մեր բաժանորդների, որ նրանց բողոքները կը մնան առանց հետևանքի, եթէ նրանք իրանց իրաւացի պահանջը տեղական պոստային գրասենեակի միջոցով չեն յայտնել մեզ։

Չարիր անգամ կրկնել ենք և դարձեալ ասում ենք, որ №№ը մենք չանձնում ենք իւրաքանչիւր կիւրակի առաւօտ Թիֆլիսի պոստին հաշւով և ստանում կառավարութիւնից սահմանւած ընկալագիր։ Ուրեմն խմբագրութիւնս չանձնելով Թիֆլիսի պոստին №№ը, այլ ևս ազատ է պատասխանատուութիւնից և իր կողմից իրաւունք ունի բողոք յայտնել, երբ բաժանորդը գրաւոր, տեղական պոստի միջոցով յայտնած կլինի իր պահանջը։

Ճշմարտութիւնը այն է, որ №№ կորչում են գաւառներում պոստ ցրիչների շնորհիւ. ուրեմն բաժ նորդները նախ պէտք է նրանց խիղ պինդ բռնեն և ոչ թէ խօսքա այլ գրաւոր պահանջելով նրանցից ղեկութիւն, որ №№ը պակաս են դուսել պոստից։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉ

ԹԻՒՆԸ սրսնով յայտարարում է, ներկայ յունւարի 30 ին, առաւօտե ժամը 10 ին, նրա ատեանում նշանւած է աճուրդ՝ 3 դ և 4-դ բաժ. քակիչ հիւանդների համար բարակ և նրանց կից քարէ ամբարներ շի լու 28138 ր. 40 կ. գումարի։

Յանկացողները մասնակցել այդ աճուրդին, կարող են շինութեան պ մանները տեսնել վարչութեան շ նութեանց բաժնում ամեն ատե օր ցերեկւան ժամը 9-ից մինչև 3-ը

3. С. О. № 282 1—1

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1901 ГОДЪ
НА ГАЗЕТУ
„КАВКАЗЪ“
съ безплатнымъ приложеніемъ
„ВѢСТНИКЪ ГОРНАГО ДѢЛА и ОРОШЕНІЯ НА КАВКАЗѢ“

Издается канцеляріею Главноначальствующаго гражданскою частью на Кавказѣ.

„Вѣстникъ горнаго дѣла и орошенія на Кавказѣ“. въ виду своего спеціальнаго характера, редактируется горнымъ инженеромъ, при содѣйствіи особаго редакціоннаго комитета.

Приложеніе это выходитъ 2 раза въ мѣсяцъ, въ форматѣ ¼ листа въ количествѣ 1—2 листовъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА на газету „Кавказъ“ съ приложеніемъ „Вѣстника горнаго дѣла и орошенія на Кавказѣ“: съ доставкою въ Тифлисъ на годъ—11 руб. 50 коп., на ½ года—6 р., на 1 мѣсяцъ—1 р.; съ пересылкою иногороднымъ: на годъ—13 р., на ½ года—7 р., на 1 мѣсяцъ—1 р. 50 коп.; за границу; на годъ—18 р. 40 к., на ½ года—9 р., на 1 мѣсяцъ—2 руб.

Отдѣльные №№ „Кавказа“ въ розничной продажѣ безъ приложеній по 5 коп.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ: въ самой газетѣ—для объявителей Кавказскаго края впереди текста 16 к. и позади текста—8 к. со строки по тита или занимаемаго ею мѣста; для остальныхъ—20 коп. впереди текста и 10 коп. позади текста; въ „Вѣстникѣ“—15 коп. съ такой строки или 20 руб. со страницы. Многократныя объявленія—по соглашенію, со скидкою.

Иногородные подписчики и объявители благоволятъ присылать плату по подпискѣ и за объявленія въ канцелярію Главноначальствующаго гражданскою частью на Кавказѣ полностью, безъ вычета за пересылку, съ точнымъ указаніемъ, на какой предметъ (за подписку или за объявленія) высланы деньги, а при заказѣ объявленій—гдѣ таковое должно быть помѣщено: въ газетѣ или въ „Вѣстникѣ“.

АДРЕСЪ РЕДАКЦІИ „Кавказа“: Тифлисъ, Эриванская площадь, домъ Харазовой. Телефонъ редакціи № 184, а конторы № 182 Адресъ. редактора „Вѣстника“: Кавказское горное управленіе. 3—